ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 օգոստոսի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

115
(2595)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 62

«Օդը փակե՛ք». սա 44-օրյա պատերազմի ժամանակ ամենից հաճախ հնչող, արտաբերվող, գրվող ու տարածվող արտահայտությունն էր: 44 օր շարունակ անօդաչու թռչող սարքերը, տարատեսակ հրթիռներն ասես անձրեւի պես էին տեղում թե՛ զինվորականների, թե՛ քաղաքացիական անձանց վրա, ու այդ օրերին բոլորն այն համոզմանն էին, որ եթե «օդը փակ» լիներ, ապա մեր մեջքը կոտրել չէր ստացվի: Աղետաբեր պատերազմից մոտ երկու տարի անց, սակայն, պարզվում է՝ ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի «օդը փակելու» հարցում թերացել կամ անգամ գործուն քայլեր չի կատարել Նիկոլ Փաշինյանի իշխանությունը: Կատարվածի ապացույցն այս օրերին Արցախում Ադրբեջանի կողմից իրականացվող ագրեսիվ գործողություններն են: 2 զոհն ու 2 տասնյակի հասնող վիրավորներն ԱԹՍ-ների հարվածներից են զոհվել (թող լույս իջնի նրանց հոգիներին):

Կհիշեք՝ ավելի քան 2 ամիս առաջ տիեզերք ուղարկված հայկական արբանյակի մասին լուրն իշխանականները որպես «Ամերիկա բացահայտել» ներկայացրին՝ հուսադրելով, թե տիեզերքից ուղարկված լուսանկարներով հնարավոր կլինի տեղորոշել հակառակորդի ռազմավարական օբյեկտները, կանխել նրանց գործողությունները եւ այլն, եւ այլն: Մոտ 2.5 ամիս անց, սակայն, «նմանը չունեցող» այդ արբանյակից որեւէ լուսանկար չի արվել, համենայնդեպս, այդ մասին հրապարակումներ չեն եղել:

Իսկ ավելի վաղ՝ պատերազմից հետո՝ մի քանի ամիս անց՝ 2021-ի մայիսին, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության ու հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն էր ահազանգում, թե սահմանը պատշաճ կահավորված չէ: Ի պատասխան՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վրդովվում էր, թե՝ «ինչպես պետք է, այնպես էլ կահավորում ենք»: «Ես ձեզ հավաստիացնում եմ, որ ոչ միայն ադրբեջանցիները, այլեւ դուք չեք կարող տեսնել այն ամենը, ինչ արվում է, որովհետեւ դրա մեծ մասն արվում է գաղտնի»,- հավելում էր նա:

Փաշինյանի վերամբարձ հայտարարությունից ավելի քան մեկ տարի անց, սակայն, ցավով ենք արձանագրում՝ սահմանի՝ մեզ համար իբրեւ թե անտեսանելի կահավորումն ու վերազինումը, փաստորեն, հերթական սուտն է եղել:

ՀՀ վարչապետի աշխատակազմը որոշել է գումար հատկացնել հասարակական կազմակերպություններին, այդ նպատակով նրանք փոփոխություններ են կատարել ՀՀ պետական բյուջեում: Մասնավորապես՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող «ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման «Կապի ծառայություններ» եւ «Գրասենյակային նյութեր եւ հագուստ» հոդվածներից համապատասխանաբար նվազեցվել է 3 մլն 307 հազար դրամ եւ 4 մլն 940 հազ. դրամ եւ ուղղվել «Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին եւ արհմիություններին» ծրագրի «Աջակցություն հասարակական կազմակերպություններին» միջոցառմանը: Որպես հիմնավորվում նշվում է առաջնահերթությունների փոփոխությունը: Սակայն հետաքրքիր է, որ այս որոշումն իր մեջ նաեւ հույժ գաղտնի կետեր է պարունակում, ընդ որում՝ թե կոնկրետ որ հասարակական կազմակերպություններին են ուղղվելու այդ գումարները, եւս անհայտ են, եւ այդ մասին, համենայնդեպս, փաստաթղթերում խոսք չկա: Իհարկե, ավանդույթ է դարձել հեղափոխական իշխանության համար, որ այս կամ այն կազմակերպութուններին գումարներ են տրամադրում, սակայն արդյունքն այդպես էլ անհայտ է մնում: Այս դեպքում էլ չի բացառվում, որ դրանք տրամադրվել են մերձիշխանական հասարակական կազմակերպություններին, որոնք չեն քննադատում կառավարությանը կամ վարչապետին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայության կողմից ձերբակալված գեներալ-մայորի քրեական վարույթով ԱԱԾ-ն կրկին հիշել է ՋՈՒ բարձրաստիճան նախկին պաշտոնյաներին եւ հարցաքննության հրավիրել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ այս քրեական գործով ԱԱԾ-ն հարցաքննության է հրավիրել ու հարցաքննել ՋՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ Մովսես Հակոբյանին: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ սույն քրեական գործով շոշափվել է նաեւ բանակին զենք մատակարարող գործարար Դավիթ Գալստյանի՝ Պատրոն Դավոյի անունը՝ մարդ, որը վերջերս դուրս եկավ բանտից: Ի դեպ, նա պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի դեմ հարուցված քրեական գործով մեղադրյալի կարգավիճակը դեռ շարունակում է պահպանել: Իսկ թե այս քրեական գործով ինչ կապ ու կարգավիճակ կունենա, «Ժողովուրդ» օրաթերթը կներկայացնի առաջիկայում:

«Ժողովուրդ» օրաթերթը, տեւական ժամանակ է, ինչ «Վեոլիա ջուր» ընկերության մի շարք աշխատակիցներից ահազանգեր է ստանում ընկերության վատ կառավարման մասին: Այն, որ այս ընկերությունը վատ է կազմակերպում իր աշխատանքը, եւ Հայաստանի հարյուրավոր քաղաքացիներ դժգոհ են մատուցած անորակ ծառայություններից, դա մեկ անգամ չէ, որ ասվել է, եւ մեկ անգամ չէ, որ գրել ենք: Պարզվում է, որ անառողջ մթնոլորտ է նաեւ ընկերության ներսում: «Վեոլիա ջրի» աշխատողները մեզ պատմեցին, որ տնօրեն Մարիաննա Շահինյանն իր մի քանի համակուրսեցիներին հավաքել է, ու ընկերության կառավարումը վերցրել են իրենց ձեռքը, փակել են բոլոր հնարավոր օղակները՝ աշխատակիցների հետ շփման: Մենք, իհարկե, փորձեցինք կապ հաստատել ընկերության հետ եւ պարզաբանումներ ստանալ ընկերությունը ղեկավարող տիկնոջից, սակայն մեզ չհաջողվեց այնպես, ինչպես շատ սպառողների չի հաջողվում ընկերության օպերատորներից որեւէ մեկի հետ կապ հաստատել ու իր դժգոհությունը հայտնել որեւէ հարցի շուրջ: Բացի այս, «Վեոլիա ջրից» մեզ ահազանգած աշխատողների պատմելով՝ անարդարություն է նաեւ աշխատավարձերի վճարման մասով, որովհետեւ ղեկավար կազմը՝ Մարիաննա Շահինյանն ու իր կուրսեցիները, ստանում են մի քանի միլիոն դրամների հասնող աշխատավարձ, մինչդեռ շարքային աշխատողները, որոնք ծանր գործն են անում, «կոպեկներ են ստանում»: Ստացվում է՝ մի քանի հոգի՝ ղեկավարությունը, որակազրկում են ֆրանսիական բրենդը, այնինչ ֆրանսիական կազմակերպությունները մինչեւ հիմա բոլորի մոտ ընկալվել են որպես օրինակելի: Մենք բախվեցինք բեսպրեդելի, երբ մի ամբողջ օր այդպես էլ չկարողացանք մեկնաբանություն վերցնել ընկերությունից: Փոխարենը զրուցեցինք ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Գարեգին Բաղրամյանի հետ եւ հետաքրքրվեցինք՝ տեղյակ է արդյոք, թե ինչ է կատարվում ընկերության ներսում: Բաղրամյանը փոխանցեց, որ սպառողի հետ կապված ցանկացած խնդիր հանձնաժողովը կարող է ուսումնասիրել: «Բազմաթիվ են բողոքները, եւ ամեն տարի՝ ամռան սեզոնին, կարելի է ասել՝ դրանք կրկնապատկվում, եռապատկվում են, հասկանալի է, նաեւ օբյեկտիվ պատճառներով, որովհետեւ ամռանը ջրաքանակը շատանում է»,- հայտնեց Գ. Բաղրամյանը:

VEOLIA

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ԴԵՄՔԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԵԶ ՀԱՄԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է նախկին դատգամավոր, ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը:

-Տիկին Հայրապետյան, Ադրբեջանը հերթական սադրանքներն է իրականացնում Արցախի տարածքում, եւ Արայիկ Հարությունյանը՝ Արցախի նախագահը, Արցախի կառավարությունը հայտարարում են, որ ադրբեջանցիները իրենց մեսիջներ են ուղարկել առ այն, որ պետք է պատրաստվեն մոտ ժամանակներս արդեն Լաչինի փոխարինող ճանապարհը շահագործելուն: Ի՞նչ կասեք այս մասին:

-Այդ սադրանքներից առաջ Ադրբեջանը տեղեկատվական հիմքեր է նախապատրաստել հստակ այդ առումով: Հիշում ենք՝ դրա նախօրեին Զաքիր Հասանովի հայտարարությունը, երբ, իբրեւ, իրենք փորձում են կանխել հայկական կողմի սադրանքները, բայց բոլորին պարզ է, որ Հայաստանը չունի ոչ մի շահագրգռվածություն սադրանքների գնալու հարցում: Դրան նախորդել է Պետական անվտանգության ծառայության պետի հայտարարությունը, այսինքն՝ եւ տեղեկատվական դաշտի, եւ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները գալիս էին փաստելու, որ Ադրբեջանը գնում է նոր սադրանքների, ընդ որում՝ եւ Հայաստանի Հանրապետության հետ սահմանների հարցում, եւ Արցախում:

-Ի՞նչ է կատարվում Արցախում:

-Արցախի հետ կապված կոնկրետ որոշակի պահանջներ ենք դնում առնվազն հրապարակային կամ ոչ հրապարակային:Հրապարակային, ինչպես նշեցինք, ուժեղանում է ճնշումը Բերձորի հետ կապված, թեեւ նոյեմբերի 9-ի հայտնի եռակողմ հայտարարության համաձայն՝ երեք տարի անց, այսինքն՝ 2023թ.-ին, պետք է նախագիծը հաստատվեր այլնտրանքային ճանապարհի: Իսկ հիմա իրենք պահանջում են դատարկել գյուղը եւ դուրս գալ այնտեղից: Ընդ որում՝ նշեմ, որ երբ այդ աղմուկը բարձրացավ մի քանի ամիս առաջ, Սոս, Աղավնու որոշ գյուղի գյուղացիներ հայտնեցին, որ դուրս չեն գալու իրենց տներից, եւ, դրան զուգահեռ, ադրբեջանական քարոզչամեքենան հրապարակումներ արեց, որ իրենք պատրաստվում են հակաահաբեկչական գործողություններ ձեռնարկել: Այն միֆը, որ անընդհատ տարածում են, որ խաղաղ կապրեն, անվտանգության երաշխիքների կարիք չկա, ամբողջությամբ հօդս ցնդեց՝ ցույց տալով, որ եթե մարդը որոշել է մնալ իր տանը, իրենք պատրաստ են ոչնչացնելու այդ մարդուն: Սա է իրենց քաղաքականությունը, եւ իրենք այս ուղղությամբ են շարժվում:

-Ձեր գնահատականը զինծառայողների հարցին. ի՞նչ է կատարվում Արցախում:

-Զինծառայողների թեման, որ ակտիվորեն արծարծվել է Ադրբեջանի կողմից, առանձնակի թափ հավաքեց հուլիսի 15-ի Իհլամ Ալիեւի հայտարարությունից հետո, ի պատասխան, ցավոք, հայկական կողմը, անվտանգության խորհրդի քարտուղարը հուլիսի 9-ին արեց այնպիսի խնդրահարույց հայտարարություն, որ ուղղակի, ինչպես ասում են, գործիք տվեց Ադրբեջանի ձեռքին հետագա ճնշումների համար: Ինչքան էլ հետագայում հայկական կողմը պնդի, որ զորքերը դուրս է բերված... Թեեւ հետ գնանք, նոյեմբերի 9-ի հայտարարության մեջ նման կետ գոյություն չունի: Կա կետ, որ զորքերը մնում են իրենց դիրքերում, հետո կան Քարվաճառի, Բերձորի եւ Ակնայի վերադարձի հետ կապված կետեր: Այսինքն՝ որ Լեռնային Ղարաբաղում զորքերը չպետք է լինեն, նման ձեւակերպումներ չկան այդ հայտարարությունում: Ադրբեջանական կողմը Արմեն Գրիգորյանի այս հայտարարության միջոցով սկսեց տեղեկատվական արշավ, որ կրկին չակերտավոր գնալու են հակաահաբեկչական գործողությունների Արցախում, եւ ամբողջ դաշտը նախապատրաստելով դրան՝ արդեն ճնշումները շարունակում են այդ ուղղությամբ: Որքան էլ հայկական կողմը պնդի, որ չկան որեւէ զինված ուժեր հայկական կողմից, Ադրբեջանը շարունակելու է հայտարարել, որ կա նման բան, եւ դրա ներքո գնալու է սադրանքի: Ուստի այդ պաշտոնյայի հայտարարությունը իսկապես շատ վտանգավոր եւ խնդրահարույց դարձավ մեր պետության համար: Բնական է, որ նորմալ պայմաններում նա անմիջապես պետք է հրաժարական տար, եւ նրա խոսքերը ի չիք դառնային, բայց, իհարկե, նա կշարունակի պաշտոնավարել եւ նոր խնդրահարույց հայտարարություններով հանդես գալ, որոնք կուղղվեն մեր պետության դեմ:

-Հայտարարությունները Արմեն Գրիգորյանը, այսպես ասած, ի՞նքն է անում: Պարզ է, որ ինչ-որ տեղից են գալիս, որ դա իր քաղաքականությունը չէ:

-Իհարկե, միանշանակ պարզ է, թե որտեղից են գալիս, ում հրահանգներն է կատարում. առաջին դեմքի հրահանգներն է կատարում, ինքը իրենով երբեք նման հայտարարություն չէր անի: Ամբողջությամբ հրահանգավորված աշխատում է, ընդ որում՝ հետաքրքրական է ինձ համար, որ նրա հայտարարությունները շատ հաճախ հակասության մեջ են Արտգործ նախարարության դիրքորոշումների եւ հայտարարությունների հետ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՉԼՈՌԵԼ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Օգոստոսի 1-ից Արցախի Հանրապետության՝ ռուս խաղաղապահների պատասխանատվության գոտու տարբեր ուղղություններով, ադրբեջանական կողմը իրականացնում է ագրեսիվ ռազմական գործողություններ՝ օգտագործելով հարվածային անօդաչու թռչող սարքեր, տարբեր տրամաչափի զինատեսակներ, նռնականետեր: Ունենք զոհեր եւ վիրավորներ:

Ադրբեջանի հանցավոր այս գործողությունները կոպտորեն խախտում են միջազգային իրավունքի հիմնարար դրույթները, ոտնահարում արցախահայերի կյանքի իրավունքի երաշխիքները, ինչպես նաեւ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ամրագրված հրադադարի ռեժիմը եւ Ադրբեջանի ստանձնած պարտավորությունները, ընդ որում՝ ադրբեջանական պետության՝ Արցախը Հայաստանին կապող միջանցքը փակելու

պահանջը եւս չի բխում հայտարարությունից, քանի որ կա ժամկետի (3 տարի), նոր ճանապարհի կառուցման, պլանի փոխադարձ համաձայնեցման, ճանապարհն ավարտելու պայմանավորվածություն:

Սա վկայում է, որ Ադրբեջանը երբեւէ նպատակ չի ունեցել եւ չի պատրաստվում գնալ խաղաղության, եւ այս պետության կողմից հայատյացությունը շարունակում է մնալ կանոնակարգված քաղաքականություն, իսկ մեր իշխանության կողմից, փոխարենը ստանձնելու Արցախի անվտանգության երաշխավորի դերը, թմբկահարվում են խաղաղության կեղծ թեզեր, արդյունքը՝ յուրաքանչյուր անգամ, երբ Ադրբեջանի որեւէ պահանջ չի բավարարվում, վերջինս դիմում է ուժի կիրառմանը կամ դրա սպառնալիքին՝ այս միջոցով պարտադրելով ցավոտ զիջումներ:

Անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ, իսկ ուշացած արձագանքը՝ անդառնալի հետեւանքներ թողնում եւ մարդկային կյանքեր արժենում, ուստի կոչ եմ անում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային գործընկերներիս, հակամարտության լուծմանը ներգրավված դերակատարներին հանդես գալ համարժեք գնահատականով եւ զսպել ադրբեջանական ագրեսիան: Համապատասխան գրությունները իմ կողմից ուղարկվում են միջազգային կառույցներին:

Խաղաղություն բոլորիս»:

ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գործադիրը որոշել է Հայաստանի հանրային հեռուստաընկերությանն ազատել 2021 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առաջացած 308 մլն 664 հազար դրամ շահութաբաժնի վճարումից: Մեզ հայտնի դարձավ, որ նշված գումարով թարմացվելու են արտոնյալ կարգավիճակում գտնվող պետական այս հիմնարկի նկարահանման տաղավարները: ArmLur.am-ը պարզեց, որ Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել շահութաբաժինը չվճարելու առաջարկություն՝ «Առաջին» լրատվական ալիքի «Լուրեր» լրատվական թողարկումների եւ հասարակական-քաղաքական ուղղվածության հաղորդաշարերի նկարահանման տաղավարների տեխնիկական վերազինման ու դեկորացիաների ձեռքբերման համար: Ավելին՝նորացվելու եւ փոփոխվելու է նաեւ «Հարցազրույց՝ Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդման տաղավարը, քանի որ նկարահանումները իրականացվում են 2018 թվականին ձեռք բերված դեկորացիաներով ձեւավորված տաղավարներում:

ԴԱՆԱԿԱՀԱՐՎԱԾԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Օգոստոսի 1-ին Երեւանի Մոլդովական փողոցի բակերից մեկում երկու հարեւան վիճել են, ու վեճի ժամանակ նրանցից ավագը դանակահարել է մյուսին: «Այդ երեկո մարմնական վնասվածքի վերաբերյալ ոստիկանության Նոր Նորքի բաժնում երկու ահազանգ է ստացվել. առաջինն օպերատիվ կառավարման կենտրոնից էր. հայտնում էին, որ Մոլդովական փողոցում դանակահարություն է եղել, երկրորդ ահազանգն արդեն հիվանդանոցից էր. «գոտկային շրջանի ծակած-կտրած վերք» ախտորոշմամբ բուժօգնության էր տեղափոխվել 59-ամյա տղամարդ: Ըստ բժշկի տեղեկանքի՝տուժողն ի վիճակի չէր ցուցմունք տալու: Նոր Նորքի քրեական հետախույզները պարեկային ծառայության Երեւանի գնդի ոստիկանների հետ իրականացրած միջոցառումներով արագ ճշտեցին, թե որ շենքի մոտ, ստույգ որ հատվածում է կատարվել դեպքը: Արդյունավետ էին նաեւ ականատես վկաներ հայտնաբերելուն ուղղված միջոցառումները. օպերատիվ հարցումներով ստացված տեղեկությունները վկայում էին, որ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ տուժողին դանակահարել էր 72-ամյա հարեւանը: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածի առկայության հիմքով՝ 72-ամյա տղամարդը նույն օրը ձերբակալվել էր»: Ըստ աղբյուրի՝ տարածքի զննությամբ հայտնաբերվել էին դանակ, արնանման հետքեր: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դանակահարված քաղաքացին մահացել է:

ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂՆԵՐԸ ԿՎԵՐԱՀՄԿՎԵՆ

Արաքս գետի հունից անթույլատրելի ծավալներով ավազ է արդյունահանվում, ինչի արդյունքում գետն աստիճանաբար փոխում է իր հունը: Արդյունքում ոչ միայն ՀՀ սահմանն է նեղանում, այլեւ անվերականգնելի վնաս է հասցվում շրջակա միջավայրին, եւ ստեղծվում է հեղեղումների լուրջ վտանգ: Մասնագետների պնդմամբ՝ վերջին տարիներին Արաքս գետի երկայնքով ձգվող ավազահանքերի պատճառով հայկական կողմից գետի հունը ներս է եկել՝ խախտելով հայ-թուրքական սահմանը՝ հօգուտ Թուրքիայի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ կառավարությունը մտադիր է գետի հունից արդյունահանման դեպքերը բացահայտել եւ իրավախախտում կատարած անձանց հայտնաբերել:

Մեզ հայտնի դարձավ, որ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը լուծման իր տարբերակն է առաջ քաշում: Պետական այս կառույցն առաջարկում է սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետառողողատային տիպի հանքավայրերից ավազի եւ ավազակոպճային խառնուրդի պաշարների արդյունահանման աշխատանքների իրականացումը ապահովել GPS համակարգով կահավորված հանութաբարձիչ եւ հանութափոխադրիչ մեքենաների եւ սարքավորումների միջոցով: Կհաջողվի արդյոք այս տարբերակով վերահսկել ավազի արդյունահանումը՝ ցույց կտա ժամանակը: Միաժամանակ նկատենք, որ կառավարության այս քայլը բավականին ուշացած է:

ԹԱՔՑՐԵԼ Է ՏՎՅԱԼՆԵՐ

Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանին մեղադրանք է ներկայացվել: Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնում են, որ համայնքապետը մեղադրվում է հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու համար, որը հանգեցրել է խոշոր չափի գույքը չհայտարարագրելուն:

Տիտանյանը ավելի վաղ այդ կասկածանքով ձերբակալվել էր: Այժմ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելու արգելքը: Նա Օձուն համայնքը ղեկավարում է 2008 թվականից:

ԹԻՎՆ ԱՃՈՒՄ Է

Հայաստանում վերակենդանացման բաժանմունքներում եւ ստացիոնարներում քովիդով հիվանդների թիվն աճում է: Այս մասին գրառում է կատարել ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի Ավան մասնաճյուղ այցից հետո: «Դժվար է համակերպվել, որ վերակենդանացման բաժանմունքներում եւ ստացիոնարներում քովիդով հիվանդների թիվն աճում է: Նշեմ, որ հոսպիտալացվածները հիմնականում չպատվաստված քաղաքացիներ են»,-նշել է Ավանեսյանը: Նախարարը եւս մեկ անգամ հորդորել է քաղաքացիներին պատվաստվել:

ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ ԵՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է

Օգոստոսի 1-ից Արցախում սկսված սահմանային լարվածությանը սկսել է արձագանքել միջազգային հանրությունը:

Միացյալ Նահանգները խորապես մտահոգված է եւ ուշադրությամբ հետեւում է հաղորդումներին՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող ինտենսիվ, զոհերի եւ մարդկային կորուստներով ուղեկցվող ռազմական գործողությունների վերաբերյալ: Այս մասին ասվում է ԱՄՆ Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Նեդ Փրայսի հայտարարության մեջ, որը հրապարակվել է Պետդեպի պաշտոնական կայքում:

«Մենք կոչ ենք անում անհապաղ քայլեր ձեռնարկել լարվածությունը նվազեցնելու եւ հետագա սրացումից խուսափելու համար: Լարվածության վերջին աճն ընդգծում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված կամ դրանից բխող մնացած հարցերի բանակցային, համապարփակ եւ կայուն կարգավորման անհրաժեշտությունը»:

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնաժողովի համանախագահ Ֆրանկ Փալոնեն կոչ է անում Միացյալ Նահանգներին հնարավոր բոլոր միջոցներով կանգնեցնել Ադրբեջանի ղեկավարության գործողություններն ընդդեմ Արցախի բնակչության. այս մասին Փալոնեն գրառում է կատարել «Թվիթեր»-ի իր էջում:

«Սա Ալիեւի կողմից Արցախի բնակչությանը Լաչինի միջանցքը փակելու նման անհեթեթ պահանջներով սպառնալու վերջին օրինակն է: Կոչ եմ անում ԱՄՆ պետդեպարտամենտին եւ ԵԱՀԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչությանը դատապարտել այս գործողություններն ու օգտագործել ցանկացած հասանելի դիվանագիտական գործիք՝ կանգնեցնելու Ալիեւի վտանգավոր գործողությունները»,- ասվում է գրառման մեջ:

Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Լուկաս Ֆուրլասը կոչ է արել Եվրամիությանը անհապաղ արձագանքել Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված հարձակումներին. այս մասին նա գրառում է կատարել «Թվիթեր»-ի իր էջում:

Ֆուրլասը մասնավորապես նշել է. «Ադրբեջանը սադրիչ կերպով կրկին հարձակում է գործում Լեռնային Ղարաբաղի դեմ՝ նոր զոհերի պատճառ դառնալով: Եվրամիությունը պետք է անհապաղ արձագանքի: Մենակ չթողնենք հայերին, որոնք այս պահին ունեն մեր կարիքը»:

Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահ զորախումբն արձանագրել է, որ օգոստոսի 3-ին շփման գծում հրադադարի ռեժիմը խախտել է ադրբեջանական կողմը: Այս մասին ասվում է ՌԴ պաշտպանության նախարարության տարածած տեղեկագրում:

«Արձանագրվում է իրավիճակի սրացում զորախմբի պատասխանատվության գոտում: Սարիբաբա բարձունքի հատվածում Ադրբեջանի զինված ուժերը խախտել են հրադադարի ռեժիմը: Ռուսական խաղաղապահ զորախմբի հրամանատարությունը ադրբեջանական ու հայկական կողմերի ներկայացուցիչների հետ համատեղ միջոցներ են ձեռնարկում իրավիճակի կայունացման ուղղությամբ»,- ասվում է տեղեկագրում:

ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը հանդես է եկել Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրման կապակցությամբ հայտարարությամբ:

«ՀԱՊԿ քարտուղարությունում անհանգստացած են Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած զինված բախումների եւ մարդկային կորուստների մասին տեղեկատվությամբ»,- նշված է հայտարարության մեջ:

«Հակամարտության կողմերին կոչ ենք անում զերծ մնալ ուժի կիրառումից եւ առկա տարաձայնությունները հաղթահարելու համար օգտագործել բացառապես դիվանագիտական մեթոդներ»,- նշել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը Ստանիսլավ Զասը:

Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ տարբեր մակարդակներում սերտ շփումները թույլ կտան հստակեցնել հարցերը, որոնք Երեւանն ունի՝ կապված ռուս խաղաղապահ ստորաբաժանումների գործունեության հետ. այս մասին հայտնել է ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովը՝ պատասխանելով ՏԱՍՍ-ի հարցին:

«Կան եռակողմ փաստաթղթեր, որոնք համարվում են գլխավոր ելման կետը: Կարեւորը կյանքի կոչել բոլոր պարտավորությունները, որոնք այդ փաստաթղթերով կողմերը ստանձնել են: Եթե կան հարցեր, ապա, անկասկած, պետք է դրանց պատասխանել: Միեւնույն ժամանակ հայկական կողմի հետ տարբեր մակարդակներում ունենք սերտ շփումներ, որոնք մեզ թույլ կտան հստակեցնել առկա հարցերը»,- ասել է Պեսկովը:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը օգոստոսի 4-ին հայտարարել էր, որ 2020 թվականի նոյեմբերից ի վեր ԼՂ-ում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, այդ թվում՝ վերջին օրերի իրադարձությունները հայ հանրության շրջանում առաջ են բերում Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ օպերացիայի բովանդակության եւ էության հետ կապված հարցեր:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՈՒՄԱՐ՝ ԱԱԾ-ԻՆ

Կառավարությունը նիստում որոշեց ԱԱԾ-ին 723,7 մլն դրամ հատկացնել: Որոշման ընդունումը պայմանավորված է Պետական պահպանության ծառայության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

ԿԱՄԵՑՎԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հրամանով՝ կասեցվել է անհատ ձեռնարկատեր Ռուբեն Նահապետյանին պատկանող կաթնամթերքի արտադրամասի արտադրական գործունեությունը: Շիրակի մարզային կենտրոնի տեսուչները վերահսկողական միջոցառումների ընթացքում արձանագրել են սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ, մասնավորապես՝ պանրի աղաջրերի համար նախատեսված ջրավազանները մաքուր եւ նորոգ չեն եղել, արտադրական տարածքը չի ունեցել խոնավ մաքրման եւ ախտահանման հնարավորություն, տեխնոլոգիական գործընթացը կազմակերպված չի եղել այնպես, որպեսզի բացառվի հումքի եւ կիսապատրաստվածքների հանդիպակաց հոսքը պատրաստի սննդամթերքի հետ, իսկ կաթնամթերքի փոխադրումը չի իրականացվել հատուկ մասնագիտացված՝ սառեցվող կամ հավասարաջերմ թափք ունեցող փոխադրամիջոցներով:

ՀԱՆԿԱՐԾԱՄԱՀ Է ԵՂԵԼ

Օգոստոսի 3-ի լույս 4-ի գիշերը քնած ժամանակ հանկարծամահ է եղել ՀՀ ՊՆ N զորամասի եռամսյա վարժական հավաքի մասնակից, պահեստազորային շարքային Ատոմ Ռազմիկի Հարությունյանը (ծնվ. 1978թ.):

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը եւ զորակցություն հայտնում Ատոմ Հարությունյանի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ ծառայակիցներին:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն մահվան պատճառը պարզելու համար:

ԴԱՏԻՑ

ԴԱՏԱՎՈՐԸ ՄԵՐԺԵՑ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Մնացական Մարտիրոսյանի, ՀՀ նախկին գլխավոր դատախազ, ՔԿ նախկին նախագահ Աղվան Հովսեփյանի գործով դատական նիստին մերժեց ինքնաբացարկ հայտնելու մասին պաշտպանների միջնորդությունը: Մնացական Մարտիրոսյանը մերժել է միջնորդությունը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Նշենք, որ պաշտպանական կողմը դատավորին ինքնաբացարկի միջնորդություն էր ներկայացրել՝ շեշտելով, որ Մնացական Մարտիրոսյանն օբյեկտիվ կերպով չի քննում գործը, ինչպես նաեւ հաշվի չի առնում Աղվան Հովսեփյանի առողջական ծանր վիճակը:

Պաշտպան Երեմ Սարգսյանի խոսքով՝ ամբաստանյալի առողջական վիճակի վատթարացման պայմաններում դատարանը պարտավոր է անհապաղ դատական նիստ հրավիրել եւ փոխել նրա խափանման միջոցի հարցը. «Մնացական Մարտիրոսյանը ընտրեց խուսափելու մեթոդը, իբր թե նոր հանգամանք չենք ասել: Այս աբսուրդների մակարդակը, որ պարոն Մարտիրոսյանը անում է եւ փորձում է փաթաթել հասարակության վզին, իրավաբանական մեթոդներ է կարդում, ուզում է տպավորություն թողնել, թե, իբր, օրինական որոշում կայացրեց»,- ասել է Ե. Սարգսյանը:

Երեմ Սարգսյանի փոխանցմամբ՝ ինքնաբացարկի միջնորդությունը հաստատ չի ընդունվելու դատավոր Մնացական Մարտիրոսյանի կողմից, որովհետեւ ինքը խնդիր ունի այս գործը քննելու, Աղվան Հովսեփյանին երկարաժամկետ կալանքի տակ պահելու եւ կայացնի պատվիրված դատական ակտը: «Այս պրիմիտիվ հանգամանքը, որ ինքը խափանման միջոցի հարցը չի քննարկում, առանց քննության է թողնում ու ասում է՝ նոր հանգամանք չկա: Այստեղ այնքան պարզ տրամաբանական հարց է, որը ինքը չի հասկանում, այսինքն՝ հասկանում է, բայց չի անում: Ասում ենք՝ անձն ունի ծանր հիվանդություն, ավելի ծանր ընթացք է ստացել, եւ այլ հիվանդություններ ունի: Այս հանգամանքը յուրաքանչյուր դատավորի պարտավորեցնում է անհապաղ քննարկել, տեսնել՝ այդ հիվանդությունների պայմաններում արդյոք անձին պետք է ազատ արձակի, թե ոչ: Մնացական Մարտիրոսյանը ընտրեց խուսափելու մեթոդը, իբր թե նոր հանգամանք չենք ասել: Այս աբսուրդների մակարդակը, որ պարոն Մարտիրոսյանը անում է եւ փորձում է փաթաթել հասարակության վզին, իրավաբանական մեթոդներ է կարդում, ուզում է տպավորություն թողնել, թե, իբր, օրինական որոշում կայացրեց»,-նշեց նա:

Նշենք, որ Հովսեփյանի պաշտպանները միջնորդել էին հրատապ դատական նիստ հրավիրելու մասին:

Երեմ Սարգսյանը շեշտել է, որ Աղվան Հովսեփյանի առողջական վիճակը ծանր է, եւ անհասկանալի է, թե ինչին է սպասում դատավոր Մարտիրոսյանը. «Ասում է՝ սա բժշկի կարծիք է, բա ո՞ւմ կարծիքն եք ուզում. որ քեզ վերեւից զանգեն, ասեն՝ ընգե՛ր, այլեւս մեր կարծիքը փոխվեց, բժիշկինը կարեւոր չի, ո՞վ է քեզ համար այդ հեղինակավոր կարծիքը. այս փաստաթուղթը տանենք, իրեն ներկայացնենք: Ես այստեղ դատարան չեմ տեսնում»:

Հիշեցնենք, որ Աղվան Հովսեփյանը ձերբակալվել է 2021թ սեպտեմբերի 7-ին՝ առավոտյան: Նախաքննական մարմինը մինչ այդ՝ շուրջ 1.5 տարի, քննություն էր իրականացրել՝ առանց Հովսեփյանին հարցաքննության հրավիրելու: Նրան միանգամից մեղադրանք են առաջադրել եւ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը: Ընդ որում՝ դատարանները բավարարել են քննիչի միջնորդությունները՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն երկարացնելու մասին՝ ընդունելով հանդերձ, որ հիմքեր չկան կարծելու, որ նա կարող է թաքնվել քննությունից: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ն. Հ.

«ՏԵԼԵԳՐԱՄ» ՀԱՎԵԼՎԱԾ

ԹՄՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ԽՈՒՄԲ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

Համացանցային «Տելեգրամ» հավելվածը հայտնի է նաեւ ապօրինի թմրաշրջանառությամբ զբաղվող էջերով, որոնց դեմ պաքարը պարբերաբար արդյունք է տալիս: Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողների ստացած տեղեկության համաձայն՝ «Գրին Հաուս 420»-ը հենց այդպիսի էջ է, որի միջոցով հանցավոր խմբի անդամները մայրաքաղաքում եւ որոշ մարզերում իրացնում են թմրամիջոց:

Ստացված տեղեկությունն իրացվեց ոստիկանության Շիրակի մարզային վարչության Կումայրիի, Անիի եւ Ախուրյանի բաժինների քրեական հետախույզների համատեղ միջոցառումներով:

Ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով Գյումրիում ձերբակալվեցին եւ ոստիկանության Կումայրիի բաժին բերվեցին Զորակապ գյուղում բնակվող 23-ամյա տղամարդ եւ 31-ամյա կին՝ երկուսն էլ օտարերկրյա քաղաքացիներ: Կնոջ մոտ հայտնաբերվեցին Մեթամֆետամինի 10 եւ «ԼՈՒ»-ի հինգ հաբ, նաեւ մոտ 35 գրամ հաշիշ:

Շարունակելով միջոցառումները՝ նույն կասկածանքով պետք է ձերբակալվեին եւս երկու օտարերկրացի: Նրանցից մեկը, որ սպորտային կազմվածքով էր, նկատելով քրեական հետախույզներին, դիմում է փախուստի: Թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ՀԿԳ ավագ օպերլիազորը, մի քանի հարյուր մետր հետապնդելով, կարողանում է բռնել փախչողին:

Երկուսն էլ ձերբակալվում ու բերվում են Կումայրիի բաժին: Հենց նրանք էին վարում տելեգրամյան «Գրին Հաուս 420» էջը:

30-ամյա տղամարդու խուզարկությամբ հայտնաբերվեց մոտ 130 գրամ հաշիշ: Փախուստի դիմած տղամարդն ընթացքում ձեռքի փաթեթը նետել էր տներից մեկի տանիք: Փաթեթում կային Մեթամֆետամին, հաշիշ եւ «ԼՍԴ» տեսակի թմրամիջոցներ ու հալյուցինոգեն սնկեր՝ ընդհանուր մոտ 180 գրամ քաշով:

Նրանց բնակության վայրի խուզարկությամբ հայտնաբերվել են համակարգիչներ, էլեկտրոնային կշեռք, դեղահաբեր, սրվակներ ու ներարկիչներ: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Չորսն էլ կալանավորվել են:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համակարգային խնդիրներ է հայտնաբերել Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում: Ըստ ՄԻՊ-ի՝ Ազատամուտ, Բաղանիս, Կիրանց, Ոսկեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Այգեպար, Չինարի, Այգեձոր, Արծվաբերդ, Չորաթան, Բերքաբեր, Բարեկամավան, Սարիգյուղ, Կոթի գյուղերում իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում համակարգային խնդիրներ են արձանագրվել անվտանգային ոլորտի, ինչպես նաեւ մարդու՝ պատշաճ եւ մատչելի եղանակով տեղեկություններ ստանալու իրավունքի, խմելու եւ ոռոգման ջրի, գազի մատակարարման, բնակիչների զբաղվածության ապահովման հետ կապված:

Այդ համայնքներում նաեւ երեխաների կրթության իրավունքի, այդ թվում՝ նախադպրոցական եւ հանրակրթական ուսումնական հաստատություններում բազմամասնագիտական թիմերի սղության, նեղ մասնագիտական ծառայությունների հասանելիության, հաշմանդամության կարգավիճակի տրամադրման գործընթացի, աջակցող միջոցների տրամադրման ընթացակարգի վերաբերյալ իրազեկվածության խնդիրներ կան:

Այս ամենից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը առողջության պահպանման իրավունքի, այդ թվում՝ վարչական շրջաններում բուժօգնություն եւ սպասարկում ապահովող կենտրոնների օղակների շենքային պայմանների եւ նյութատեխնիկական հագեցվածության, դեղորայքի եւ մի շարք բժշկական ծառայությունների հասանելիության խնդիրներ է արձանագրել:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Նախօրեին Գյուրջյան փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ Նոր Նորքի բաժին է ներկայացվել 24-ամյա Արթուր Ս.-ն, որը հուլիսի 8-ից Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի մեղադրանքով: Խափանման միջոցը՝ ստորագրություն:

ՀՐԴԵՀ՝ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒՄ

Երեկ խոշոր հրդեհ է տեղի ունեցել Երեւանում: Ահազանգ է ստացվել, որ Երեւանի բուսաբանական այգու տարածում խոշոր հրդեհ է բռնկվել: Մինչ հրշեջների ու պարեկների ժամանումը կրակի դեմ պայքարում էին Բուսաբանական այգու աշխատակիցները, այդ թվում՝ տարեցները: Այրվել է մոտ 8 հազար քմ տարածք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 3-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել են հանցագործության 55 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՒՄԱՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

«Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության եւ Տավուշի մարզի սահմանամերձ Վազաշեն գյուղի բնակիչ Ալբերտ Բախչագուլյանի միջեւ 2014 թվականի ապրիլի 28-ին կնքվել է փոխառության պայմանագիր, որի հիման վրա «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ն Ա. Բախչագուլյանին տրամադրել է նպատակային փոխառություն 3 միլիոն 635 հազար ՀՀ դրամի չափով, որը Ա. Բախչագուլյանը պարտավորվել է վճարել 2014 թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ 2034 թվականի փետրվարի 15-ը ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝ ամսական15 հազար 150 դրամի չափով: Ի ապահովումն փոխառության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման՝ 2014թ. ապրիլի 30-ին «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի եւ Ալբերտ Բախչագուլյանի միջեւ կնքվել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող գույքի՝ Տավուշի մարզի Վազաշեն գյուղի 8-րդ փողոցի 8 տուն հասցեում գտնվող 319,9քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան եւ նույն հասցեում գտնվող 0,105 հա մակերեսով հողամասի հիպոթեքի պայմանագիր, ըստ պայմանագրի՝գրավի իրավունքը տարածվում է նաեւ հողամասի վրա հետագայում կառուցվելիք բոլոր շինությունների վրա: Համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի՝ Վազաշեն գյուղի 8-րդ փողոցի 8-րդ բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Ա. Բախչագուլյանին, իսկ Վազաշենի 8-րդ փողոցի 8-րդ տունը եւ 0,105 հա մակերեսով հողամասը գրավի իրավունքով գրանցված է «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի անվամբ: 2014 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2021 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակամիջոցում Ա. Բախչագուլյանի պարտավորության չափը «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ին կազմում է 2 միլիոն 704 հազար 900 դրամ: «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ն Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան գումարի բռնագանձման պահանջով հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ Ա. Բախչագուլյանի: 2022թ. հուլիսի 14-ին դատավոր Նոնա Դալլաքյանը վճռել է հայցը բավարարել մասնակի, Ա. Բախչագուլյանից հօգուտ «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի բռնագանձել 2 միլիոն 704 հազար 900 դրամ՝ որպես փոխառության պայմանագրով չկատարված պարտավորության գումար, բռնագանձումը տարածել գրավի առարկա հանդիսացող, Ա. Բախչագուլյանին պատկանող 0,105 հա մակերեսով հողամասի վրա, «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ն ընդդեմ Ա. Բախչագուլյանի՝ Ա. Բախչագույանին պատկանող այլ գույքերի վրա բռնագանձում տարածելու պահանջը մերժել, Ա. Բախչագուլյանից հօգուտ «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի բռնագանձել 102 հազար 558 դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաեւ 30 հազար դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Կառավարությունը որոշում է ընդունել «ՀՀ 2022 թ. պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություն, ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ: Տկե նախարար Գնել Սանոյանը զեկուցել է, որ որոշումը բխում է ՀՀ վարչապետի մոտ 2022թ. հուլիսի 18-ին կայացած՝ «Կյանքի պուրակի» նախագծի քննարկման շրջանակում տրված հանձնարարականից: Մասնավորապես, առաջարկվում է ջրագիծ անցկացնել մինչեւ Բուսաբանական այգի, որով երկրորդ փուլով ողջ այգու տարածքում կանցկացվի համապատասխան ցանց, եւ այն կապահովվի ջրով: Ջրագծի երկարությունը մոտ 1,5 կմ է, որը պետք է սկսվի Մարկավագի փողոցից եւ հասնի մինչեւ Բուսաբանական այգի: Նախարարը նշել է, որ ամբողջ ծրագրի արժեքը 245 մլն ՀՀ դրամ է, եւ քանի որ նախագծով իրականացման համար նախատեսված է մոտ 200 օր, առաջարկվում է այս տարվա համար պլանավորել աշխատանքների կեսը եւ հատկացնել 122 մլն ՀՀ դրամ գումար: Եթե մրցույթում հաղթող շինարարական ընկերությունները կարողանան ավելին անել, հատկացվող գումարի ծավալը կավելանա, եթե ոչ, գումարի մնացածը մասը կնախատեսվի մյուս տարվա բյուջեով:

Ընդգծելով «Կյանքի պուրակի» նախագծի կարեւորությունը՝ վարչապետը նշել է. «Հարգելի՛ գործընկերներ, իրականում այս որոշումը որոշակի նախապատմություն ունի: 2020թ. 44-օրյա պատերազմից հետո մենք որոշեցինք, որ մեր նահատակների անվամբ կամ նրանց հիշատակը խորհրդանշող նոր կարգի սիմվոլ ունենանք, եւ մտածեցինք, որ պետք է ստեղծել մայրաքաղաքում մի պուրակ, որը խորհրդանշի կյանքը եւ կյանքի հաղթանակը: Գաղափարի քննարկման արդյունքում եկանք այն եզրակացության, որ պետք է ուղղակի լավ պուրակ ստեղծենք, եւ այն նախատեսված լինի, որ երեխաները գնան, աղմկեն, խաղան, ընտանիքներով մարդիկ գնան, այնտեղ ժամանակ անցկացնեն, զբոսնեն, եւ դա լինի կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ ներկայացնող կարեւոր խորհրդանիշը, եւ մեր նահատակների հիշատակի ընդգծման այդպիսի՝ մի փոքր այլ մեթոդ կիրառենք: Դրա մասին բազմիցս ենք խոսել:

Երբ հողատարածք էինք փնտրում, մեզ ասվեց, որ Երեւանի Բուսաբանական այգում մոտ 30 հա ամայի տարածք կա, որը չորացել է ժամանակի ընթացքում չխնամելու բերումով: Հետո այս քննարկումների ընթացքում պարզվեց, որ իրականում ամբողջ Բուսաբանական այգին կամ դրա մեծ մասն է այդ վիճակում, ինչն անակնկալ էր մեզ համար: Մենք հասկացանք, որ իրականում, «Կյանքի պուրակի» գաղափարն օգտագործելով, պետք է վերակենդանացնենք ամբողջ Բուսաբանական այգին եւ ծրագրի մասշտաբներն ընդլայնենք: Եվ մոտավորապես մեկ ամիս առաջ նախագծի քննարկում է տեղի ունեցել, նախագծի ընդհանուր կոնցեպտուալ մոտեցման վերաբերյալ կարծես որոշակի եզրակացության եկել ենք: Բայց այդ ընթացքում պարզվեց, որ, անկախ այդ ամենից, կա ջրագիծ անցկացնելու խիստ անհրաժեշտություն, որովհետեւ Բուսաբանական այգում ոռոգման խնդիր կա: Մենք որոշեցինք սա իրականացնել շուտափույթ, այսինքն՝ առաջնային կարգով, եւ հույս ունենք, որ հնարավորինս արագ այդ աշխատանքը կսկսվի:

Ընդ որում՝ երբ ծրագիրն ամբողջությամբ իրականացնենք, նախ՝ Երեւան մայրաքաղաքի համար դա շատ մեծ էկոլոգիական նշանակություն կունենա, համայնքային կյանքի կազմակերպման համար մեծ նշանակություն կունենա եւ, ինչպես ասացի, մեր նահատակների, մեր ընկած զինվորների, եղբայրների, սպաների հիշատակի ընդգծման նոր մեթոդ կդառնա: Ես այդ մասին խոսել եմ նաեւ 2021 թվականին՝ Հայաստանի անկախության 30-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ՝ խնդիրը ձեւակերպելով մեկ նախադասությամբ. «Մեր նահատակներն ընկան, որ Հայաստանն ապրի»: Մենք այդ ապրելու տրամաբանությունը պետք է կարողանանք զարգացնել, որքան էլ բոլոր հնարավոր կողմերից փորձեն այնպես անել, որ դա հնարավոր չլինի: Բայց մենք պետք է գնանք այս ճանապարհով եւ այդ առաքելությունն իրագործենք»:

ԼՈՒՐԵՐ

ԲՈՒՖԵՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ ԴԵՐ

Աժ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը սոցցանցի իր էջում գրել է. «ՀՀ ԱԳ նախարարությունը հայտարարությամբ է հանդես եկել, որում անդրադառնալով «Լաչինի միջանցք»-ի շուրջ ստեղծված իրավիճակին՝ նշում է. «Անթույլատրելի ենք համարում ադրբեջանական կողմից հնչող հայտարարությունները, որոնցով փորձ է արվում միակողմանիորեն փոփոխել Լաչինի միջանցքում եռակողմ հայտարարության 6-րդ կետով սահմանված իրավական ռեժիմը, եւ վերահաստատում, որ Լաչինի միջանցքով անցնող երթուղին կարող է փոփոխվել միայն հայտարարությունը ստորագրած կողմերի հաստատած պլանի համաձայն»: Լաչինի միջանցքի երկայնքով կառուցվող ճանապարհով նոր երթուղու շահագործման դեպքում «միջանցք» հասկացողությունը դուրս է գալու գործածումից եւ պարզապես վերածվելու է ճանապարհի: Հիշեցնենք, որ միջանցքի դեպքում սահմանված էր ճանապարհի աջ ու ձախ հատվածներում 2.5-ական կմ հատված՝ ընդհանուր 5 կմ լայնությամբ, որն, ըստ էության, նաեւ բուֆերային գոտու դեր ուներ եւ այն սահմանված էր առաջին հերթին անվտանգության նկատառումներով:

Նոր երթուղու դեպքում Ադրբեջանը փորձում է հասնել բուֆերային գոտու, անվտանգության շերտի վերացմանը, ինչի արդյունքում տեսականորեն ճանապարհից 5-10 մետր հեռավորության վրա կարող են ադրբեջանական դիրքեր ու անձնակազմ տեղակայվել, ինչը բացառելի է գործող միջանցքի պարագայում (Շուշիի հատվածում այլ ռեժիմ է գործում): Թե ինչ հետեւանքների կբերի այս վտանգավոր գաղափարի գոյությունը հենց միայն անվտանգային տեսանկյունից, արդեն պարզ է, իսկ ՀՀ իշխանությունների տրաֆարետային հայտարարությունները զուտ իմիտացիոն, իշխանության պահպանման գործառույթ ունեն»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը գտնվում է կառուցվածքային փոփոխությունների գործընթացում, որի անհրաժեշտությունը պայմանավորված է նախարարության կողմից իրականացվող մի շարք ոլորտներում նոր գործառույթների ավելացմամբ, ինչը հանգեցրել է նախարարության առջեւ դրված խնդիրների, գործառույթների եւ ստորաբաժանումների լրացմանը: Նախարարության ներկայիս 13 հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների փոխարեն սահմանվել են 21 հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ առկա 85 քաղաքացիական ծառայության թափուր եւ ժամանակավոր թափուր պաշտոնների թվաքանակը նախատեսվում է դարձնել 110:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, գյուղ Արայի, 1-ին փողոց, 63 հասցեում գտնվող 286,39 ք.մ. բնակելի տուն, 2,73 ք.մ. կաթսայատուն եւ 0,151 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Բ. Ֆանարջյան փողոց, 2-րդ նրբանցք, 1/2 հասցեում գտնվող 196,4 ք.մ. բնակելի տուն, 7,0 ք.մ. ինքնակամ շինություն եւ 0,01618 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 86000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 22.08.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիէսԹի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՆԱԿ ԶՈՐԱԿՈՉՎԵԼՈՒ ՏԱՐԿԵՏՈՒՄ

ՀՀ կառավարության երեկվա նիստում փոփոխություն է կատարվել «Գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը եւ պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ. հայտնում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից:

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել գիտության եւ կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալուն առնչվող գործընթացների կատարելագործման, դրանց արդյունավետության բարձրացման եւ պարզեցման հետ:

Ընթացիկ իրավիճակը

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված է՝նշանակալի նվաճում է համարվում քաղաքացու՝ լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի աշխարհի համալսարանների ակադեմիական ընդհանուր (Academic Ranking of World Universities) եւ ըստ ոլորտների (Global Ranking of Academic Subjects) տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում սովորելու կամ դիմորդ հանդիսանալու հանգամանքը:

2018 թվականից գործածվող այսօրինակ կարգավորումը վերանայման անհրաժեշտություն ունի, քանի որ որեւէ կերպ հիմնավորված չէ բուհերի նման լայն շրջանակ սահմանելը: Շատ հաճախ նշված բուհեր ընդունվելը պայմանավորված է լեզուների իմացությամբ եւ քաղաքացիների վճարունակ լինելով:

Առաջարկվող լուծում

Գործընթացի ամբողջական կարգավորման համատեքստում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տարկետման նոր համակարգ ներդնելու օրենսդրական փոփոխության նախաձեռնությամբ արդեն իսկ հանդես է եկել: Մասնավորապես՝ կառավարությունը կարող է սահմանել այն բուհերի եւ մասնագիտությունների ցանկը, որոնցում սովորելու համար քաղաքացիներին կտրամադրվի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում: Նշված կարգավորումը ավելի նպատակային եւ պետության կարիքներից բխող տարկետման համակարգի ստեղծման հիմք կհանդիսանա:

Կատարված փոփոխությամբ հստակեցվում է բուհերի վարկանիշավորման ցանկը՝այն նշանակալի նվաճում հասկացությանը համարժեք դարձնելու տեսանկյունից:

Կարգի կիրարկման ընթացքում քաղաքացիների իրավունքների տեսանկյունից խնդրահարույց է նաեւ «տվյալ տարվա ցանկեր» արտահայտությունը, քանի որ http://www.shanghairanking.com/ կայքում բուհերի ցանկերի թարմացումը չի համընկնում տարկետման գործընթացի հետ: Նոր կարգավորմամբ սահմանված՝ «պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար դիմելու կամ դրան նախորդող տարվա» կարգավորման նպատակն այն է, որ քաղաքացիներն ուսումնական հաստատություն ընտրելու պահին (դա կլինի նախորդող, թե դիմելու տարվա ընթացքում) արդեն իսկ վստահ կլինեն, որ տարկետման գործընթացում կդիտարկվի իրենց ընտրության պահին գործող բուհերի վարկանիշավորման ցանկը, եւ հետագա փոփոխություններն իր վրա չեն տարածվի: Նմանատիպ դեպքերում եւ՛ քաղաքացիների, եւ՛ վարչական մարմնի գործողությունների, եւ՛ նշանակալի նվաճման համապատասխանության որոշման հարցերում գործընթացը լինի կանխատեսելի եւ հստակ:

Որոշումն ուժի մեջ կմտնի 2023 թվականի մարտի 1-ից, հետեւաբար 2023 թվականի ապրիլի 1-ից դիմող քաղաքացիների համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման համար որպես նվաճում կհամարվի աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի աշխարհի համալսարանների ակադեմիական ընդհանուր (Academic Ranking of World Universities) ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում սովորելու հանգամանքը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՀ Սնանկության դատարանի՝ 25.07.2022թ. թիվ ՍՆԴ/0987/04/22 վճռով՝ Արմեն Աղեկյանը (հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Բաշինջաղյան փողոց, 176շ., բն. 21, անձ.՝ AK0582464, տրվ.՝08.08.2010թ., 001-ի կողմից) ճանաչվել է սնանկ:

Նույն դատարանի՝ 25.07.2022թ. որոշմամբ՝սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Տարոն Բանդուրյանը:

Պարտատերերը իրենց պահանջները ներկայացնում են ՀՀ Սնանկության դատարան «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով՝ սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. Հ0-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ)՝ 2022 թ. օգոստոսի 15 - ին՝ ժամը 12.00-ին, ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածնի վարչական շենքում /Էջմիածին Մաշտոցի փող., 0 շենք/ տեղի կունենան ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 75/4-6 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ զանգահարելով +374 99994222 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

ՀՀ Սնանկության դատարանի 29.06.2022թ. թիվ ՍՆԴ/1760/04/22 վճռով՝ Քնար Սմբատի Քոսյանը (հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Նոր-Արեշ, 34-րդ փողոց, թիվ 7 տուն, նույնականացման քարտ՝ 005817093, տրված՝ 30.10.1989թ.) ճանաչվել է սնանկ:

Նույն դատարանի որոշմամբ՝ 08.07.2022թ. պարտապանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Տարոն Բանդուրյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի կարգով՝ սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

Կորել է Շուշանիկ Սերյոժայի Համբարձումյանի՝ Ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկումից ստացած դիպլոմը: Հեռ.՝ 098 72 92 79, էլ. փոստ՝ tatevabraham@mail.ru:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԿԱՐԾԻՔ

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ Columbia Records-Ի ՀԵՏ

Snap երգի՝ համաշխարհային հիթ շքերթներում առաջատար հորիզոնականներ զբաղեցնելուց հետո «Եվրատեսիլ 2022»-ում Հայաստանը ներկայացրած Ռոզա Լինը հայտնել է եւս մեկ ձեռքբերման մասին: Երգչուհին պայմանագիր է կնքել Columbia Records ընկերության հետ: Կիսվելով իր՝ եւս մեկ իրականացած երազանքով՝ Ռոզան կրկին կոչ է արել իր հետեւողներին չհանձնվել ու գնալ երազանքների հետեւից. «Անգամ իմ ամենահամարձակ երազում չէի կարող պատկերացնել, որ մի օր կասեմ սա, բայց ես այսուհետ Columbia Records-ի հետ պայմանագիր կնքած արտիստ եմ: Այս ստուդիան տուն է իմ կուռքերից շատերի համար: Իմ կյանքն ավելի արագ փոխվեց, քան ես կպատկերացնեի: Շնորհակալ եմ բոլորիդ, որ աջակցեցիք Հայաստանի ուրտում գտնվող փոքրիկ քաղաքից եկած աղջկան եւ որ սիրեցիք ու լսեցիք Snap-ը: Այնքան ուրախ եմ, որ այս երգը միավորել է մեզ. հիմա ես պատրաստ եմ մեր ուղեւորության հաջորդ փուլին:

Հիշեք՝անգամ եթե ամեն ինչ ձեր դեմ է, եւ ձեր նպատակներն անհնարին են թվում, ու այն, ինչ անում եք, ամենաճիշտ բանն է թվում, ուրեմն շարունակեք դա անել, քանի որ աշխատասիրությունն ու վճռականությունը, ի վերջո, պարգեւատրվում են»,-գրել է երգչուհին:

Վանաձորում ծնված 22-ամյա Ռոզա Լինը իր հեղինակային Snap երգով Հայաստանը ներկայացրել է «Եվրատեսիլ 2022»-ին, որտեղ զբաղեցրել է 20-րդ հորիզոնականը, սակայն մրցույթից հետո Ռոզայի՝ անկեղծ էմոցիաներից ստեղծված երգը նրան հասցրել է համաշխարհային հիթ-շքերթների առաջատար հորիզոնականներ: Երգը ակտիվորեն կիրառվում է նաեւ տիկտոկյան ու ինստագրամյան մի շարք հոլովարկերում, որոնցից շատերն ունեն միլիոնավոր հավանություններ: Ինչ վերաբերում է Columbia Records-ին, այն պատկանում է Sony Records Entertainment ընկերությանը: Այս լեյբլի ներքո ձայնագրվել են այնպիսի արտիստներ ու խմբեր, ինչպիսիք են Ադելը, Բեյոնսեն, AC/DC-ն, Aerosmith-ը, Դեյվիդ Բոուին, Մրայա Քերին, Pink Floyd-ը, Ֆրենկ Սինատրան, Բարբարա Սթրեյզանդը եւ այլք:

ՕՊԵՐԱ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԼՍՈՒՄՆԵՐ

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի եւ «Օտտավիո Զիինո» (Ottavio Ziino) միջազգային օպերային մրցույթի նախաձեռնողների համագործակցության արդյունքում 21-րդ մրցույթի լսումներն անցկացվում են օպերային թատրոնում:

Լսումները մեկնարկել են օգոստոսի 2-ին:

Նախագծի ղեկավար Լիլիթ Գաբրիելյանի խոսքով՝ «Օտտավիո Զինո» 21-րդ միջազգային լիրիկական մրցույթի լսումները Հայաստանում անցկացնելն ունի գերագույն նպատակ՝ աշխարհին տեսանելի դարձնել հայ տաղանդավոր օպերային արտիստներին, ինչպես նաեւ մաս կազմել նման բարձր նշանաձող սահմանած միջազգային մրցույթի:

«Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը նպատակասլաց գնում է այդ ճանապարհով»,- շեշտում է նա:

2002 թվականից «Il Villaggio della Musica» մշակութային ասոցիացիան Իտալիայում՝Հռոմում՝մելոդրամայի հայրենիքում եւ բնօրրանում, հիմնադրել է «Օտտավիո Զինո» միջազգային օպերային մրցույթը, որը կրում է հայտնի դիրիժորի, ծագումով սիցիլիացի կոմպոզիտորի անունը: Մինչ օրս մրցույթին մասնակցել է շուրջ 6000 օպերային երգիչ ամբողջ աշխարհից: C.L.I.O.Z. -ի հաղթողների թվում են Ջեսիկա Պրատը, Մարինա Ռեբեկան, Լուչիանո Գանցին, Անժելա Նիսին, Կլաուդիո Սգուրան, Տոշակի Մուրակամին, Սիմոնե Պիացոլան եւ այլք: Միջազգային օպերային մրցույթն այս տարի կանցկացվի սեպտեմբերի 20-22-ը Հռոմում՝ Ghione Theatre-ի հոյակապ միջավայրում: Ամեն տարի ժյուրիի կազմում ընդգրկվում են հեղինակավոր օպերային թատրոնների տեսուչներ եւ գեղարվեստական ղեկավարներ, օպերային երգիչներ եւ կոմպոզիտորներ:

ԼՈՒՐԵՐ

75 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ԱՌԱՋԱՐԿ

Լոնդոնի «Չելսին» «Լեսթեր Սիթիի» 21-ամյա պաշտպան Ուեսլի Ֆոֆանայի համար առաջարկել է 75 միլիոն եվրո, սակայն մերժում է ստացել: «Լեսթեր Սիթին» Ֆոֆանային առայժմ համարում է անփոխարինելի ֆուտբոլիստ եւ մինչեւ հաջորդ ամառ չի քննարկի նրա տրանսֆերը: Ֆոֆանան ցանկանում է տեղափոխվել գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած թիմ, որպեսզի հանդես գա Չեմպիոնների լիգայում: Ֆոֆանան 2020թ. հոկտեմբերին է ֆրանսիական «Սենթ Էթիենից» տեղափոխվել «Լեսթեր Սիթի», որի հետ նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2027թ. հունիս:

ԱՐՏԻՍՏԸ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ Է

Ռուսաստանի ժողովրդական արտիստ, դերասան Ալեքսանդր Ֆիլիպենկոն շտապ հոսպիտալացվել է Մոսկվայում: Հոսպիտալացման պատճառը եղել է կորոնավիրուսային վարակը: 77-ամյա արտիստի վիճակը բժիշկները գնահատում են միջին ծանրության: Հաստատվում է, որ դերասանն ունի նաեւ սրտի քրոնիկ խնդիրներ, մասնավորապես՝ սրտի իշեմիկ հիվանդություն, սրտի անբավարարություն եւ նախասրտերի ֆիբրիլացիա: Նախնական տվյալներով՝ Ֆիլիպենկոյի մոտ հայտնաբերվել է թոքաբորբի նախնական դրսեւորում:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

Տեղեկացնում ենք, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թվայնացման եւ բիզնես գործընթացների կատարելագործման շրջանակներում եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի թույլտվությամբ՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկի՝ ք. Երեւանի «Երվանդ Քոչար» մասնաճյուղը (հասցե՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի պողոտա, 29ա, 99 շին.) 2022թ. օգոստոսի 15-ից չի գործելու:

Նշված մասնաճյուղում տեղադրված են Cash-in/Cash-Out բանկոմատներ, որոնց միջոցով կարելի է կատարել բանկային գործառնություններ. հասանելի են նաեւ բանկի հեռահար սպասարկման ուղիները՝ «Մոբայլ բանկինգ», «Ինտերնետ բանկինգ» եւ «Վիդեո բանկինգ»:

գ «Երվանդ Քոչար» մասնաճյուղի բոլոր հաճախորդների, ինչպես նաեւ նրանց ակտիվների եւ պարտավորությունների սպասարկումը, 2022թ. օգոստոսի 15-ից սկսած, կիրականացվի ք. Երեւան, Տիգրան Մեծի պողոտա 48 շենք, հ. 41 հասցեում գտնվող «Էրեբունի» մասնաճյուղում:

Բացի նշված մասնաճյուղից, հաճախորդները կարող են սպասարկվել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ցանկացած այլ մասնաճյուղում:

Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք զանգահարել 87 87 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● *Օգոստոսի 10-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա ««Անտիկվար» Լեռնիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Քոլեջի ո՞r շրջանավարտը կարող է ուսումը շարունակել բուհի 2-rդ կուրսում եւ կրթության ի՞նչ ձեւով:

Ջինաիդա Սերոբյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քոլեջի՝ բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N 752-Ն որոշմամբ: Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է հետեւյալ կերպ՝ մինչեւ 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը: Հավակնորդը կամ քոլեջը համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է բուհ մինչեւ տվյալ տարվա օգոստոսի 30-ը: Հատկացված տեղերից ավելի դիմումների դեպքում սահմանված կարգով անցկացվում է մրցույթ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 եւ ավելի տոկոս կազմող տարբերությունը:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է ուսանողը հեռացվում բուհից:

Վահագն Խաչատրյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսանողը բուհից հեռացվում է՝

1. ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,
2. բուհի կանոնադրությամբ եւ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում,
3. բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով ընդունված, սակայն բուհից հեռացված ուսանողները զրկվում են տարկետման իրավունքից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

1. ասպիրանտի կողմից տարբեր պատճառներով կազմակերպությունում ասպիրանտուրայի գիտակրթական գործընթացի ընդհատման դեպքում,
2. ասպիրանտի կողմից աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման դեպքում,
3. ասպիրանտի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պայմանների խախտման դեպքում,
4. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված գիտակրթական գործընթացի չապահովման, ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած եւ ավարտած մասնագետին համապատասխան մասնագիտությամբ աշխատանքի տեղավորելու պայմանների խախտման դեպքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում՝ Արցախի փողոցում

Միմյանց են բախվել Mercedes եւ Nissan Tida մակնիշի ավտոմեքենաները: Nissan Tida-ն բախվել է ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված կանաչապատման աշխատանքներ կատարող Երեւանի քաղաքապետարանի կանաչապատման վարչության Mercedes Sprinter-ին եւ որպես վերամբարձ կռունկ օգտագործվող ԳԱՅԵԼԻՆ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: